

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51<sup>րդ</sup> ՏԱՐԻ, ԹԻԻ 45

Գ. ՇՐՋԱՆ

9 ՆՈՅԵՆՄԲ. 1902

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթների ստեղծման քաղաքական և գիտական շարժումն էր. եւ գաղափարներն հարկւր Յիսուսն էր, կանխիկ վճարելի: Արտասանում 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախսը խմբագրության վրայ է: Վեցամսեայ քաղաքականագրութիւն չընկունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին առկա ամսույ մէկէն: Մասիս հրապարակ կ'եղի առկա շաբաթ առտու: Այն քաղաքները որոնք պակաս քերք ունայան են, պէտք է խնայել խնայել խմբագրութեան: Ժամանակ անցնելի վերջ աշխատանքային առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده « ماسيس » غزته سي اداره سته

ԽՏՐԱԳՐՈՒԹԻՒՆ (ՄԱՍԻՍ) Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԷՐՃԱՅԻ



ԱՊԱՌՈՒՄ ՎԱՃԱՌԱՏՈՒՄ  
Յանապետական գլխավորական  
համայն


ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Եթե կուզե՞ք ամէն  
տեսակ գոնարեղէններ  
ունենալ, դիմեցե՛ք  
Կ. Պոլիս, Ոսկերչաց  
Շուկայ մեծ փողոց թիւ 13

Հերձայի վանաւաստներ ունի եւրոպական  
ճաշակով պարտատուած գոնարեղէններ,  
ամենքն ալ տառջակարգ ըլլալու պայմանաւ:  
Հերձայի վանաւասան գիներն անմրցելի են:  
Հերձայի վանաւաստներ ունի արծաթեղէն  
առարկաներ:  
Հերձայի վանաւաստներ ունի ժամացոյցներ  
եւ արծաթեայ գաւազաններ (պապօթն):

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հալիւրին Բաւն կանիւրի, միացեալին հա-  
մար շարժական հարիւրին հինգ Վճարում:  
Կանիւրի գնորդին համար 100ին 5 գեղչ:  
Գործածուած գոնարեղէններ՝ եթէ վնաս-  
ուած չեն՝ 100ին 10 գեղչով ետ կառնուին:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կար-  
մեքենայի մնայ: Եայց էական կէտն է լաւ մեքե-  
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը  
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-  
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվեր-  
դ գոնութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:  
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

(ՀԱՅՐԱՅՔԻՉ ԿԱՅՍ. ՓԱԼԱՅԱՆ)  
The Singer Manufacturing Cie

Չեռքի, ոռքի ու ոռքի եւ ձեռքի  
միանգամայն մեքենաներ  
կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. այն մեքենան ամենէն  
աւելի կատարելագործուածը, հաստատուելու եւ  
շիւրագործածելին ըլլալուն բովանդակ աշխարհի  
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառու-  
աւանց մէջ:

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՐԱՆԻ ՊԵՐԿԱՐԳԱՐԱՆԻ  
ԳՐԻԹՈՒՄ

- |         |   |                                                    |
|---------|---|----------------------------------------------------|
| ԲԵՐԱ.   | { | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, թ. 343 եւ 343 կրկին.  |
|         |   | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.            |
| ԿԱԼԱԹԱ. | { | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.                     |
|         |   | 2. Գարաքէօյ, Թրամիլէյին կայարանին դէմ.             |
| ՊՈԼԻՍ   | { | 1. Սուլթան Համամ, թիւ 2.                           |
|         |   | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամուէյի կայարանին դէմ, թ. 13 |
| ՍԿԻԻՏԱՐ |   | Զարչը Պօլու, թ. 120.                               |

Դասեր եւ նորագոյնիւն ձիւ-  
կասարեալ երաժշտութիւն  
Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,  
թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս պէյ Տիւգոյլուի տունը:



# ՄԱՍԻՆ

51<sup>րդ</sup> ՏԱՐԻ

— 9 ՆՈՅԵՄԲԵՐ 1902 —

ԹԻԻ 45

Ի ՈՎ Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

Զօլայի «Լա Թեո»ը (Անձնական լիցատակ). Օ. ԶԻՅԹԻՄԱՐԱՅ: — Տուճիս համբան (Պզտիկ նի-  
լիք). ԽՈՍՐՈՎ. ԳԷՇԵՆՆԱՆ: — Զ'ամուսնացողները (Ամերիկեան Հանդես մը քաղուած). Ե: —  
Կգուաններ (Բանաստեղծութիւն). Վ. Տ. — Գերման Գրականութիւն. Լաուրէլա (Վեպ). ԲՍՈՒՂ  
ՀԱՅԶԷ: — Յուշեր:

## ԶՕԼԱՅԻ «ԼԱ ԹԵՈ»Ը

### ԱՆՁՆԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

1892ին blanc-bec մըն էի դեռ: Երկրոր-  
դական վարժարանին չրջանը առանց աւար-  
տելու դուրս նետուեցայ, ինչպէս որ նախ-  
նական վարժարանին չրջանն ալ չէի աւար-  
տած երրոր թողուցի դայն: Քիչ մը տատա-  
նելէ ետքը, յանձնարարութիւնով մը Ա. . .  
նորայններուն վաճառատունը մտայ, իբր sur-  
numéraire: Երկուշարթի օր մըն էր: Միեւ-  
նայն օրը, իմ դպրոցէս, իմ կարգէս, ու ին-  
քի արդէն նախապէս ալ ծանօթ ուրիշ երի-  
տասարդ մը, որ ինքն ալ ինծի պէս կիսա-  
ւարտ կը ձգէր իր ուսումը, ներկայացաւ,  
ինծի պէս ձեռքը յանձնարարական մը բռնած:  
Ան ալ ընդունուեցաւ: Այն օրը զարմացում-  
նիս մեծ եղաւ երրոր հին ու խոշոր գրասե-  
ղանի մը առջեւ, դէմ դէմի գտնուեցանք,  
ինչպէս երէկ դասարանին մէջ, երբ իրարմէ  
վերջնապէս բաժնուիլ կարծած էինք ու մնաս-  
րարութիւնը նետած իրարու: Գիտէինք սակայն  
որ, մէկ անձի մը պէտք պիտի ըլլար վաճա-  
ռատան մէջ, քիչ օրէն, գրադիրներէն մէ-  
կուն ինքնաբերաբար մեկնելովը: Երկուքնուս  
վիշտ աւելորդ էր հոն: Կասկածեցանք իրար-  
մէ, առանց ոչինչ յայտնի ընելու: Շիտակը  
խոսած ըլլալու համար հարկ է ըսել որ անոր  
յանձնարարականը շատ աւելի զօրաւոր էր.

իմս՝ բերնէ բերան, second hand մը միայն:  
Ատոր համար է որ չի զարմացայ երրոր տե-  
սայ որ նախապատուութիւն մը ցոյց կը տըր-  
ուէր անոր: Բայց ան, փոխանակ ոգեւոր-  
ուելու նպաստաւոր այդ պարագայէն, ար-  
դէն իսկ ջլատուած կը զգար ինքզինքը,  
կեանքի մէջ իր հանդիպած առաջին մրցակի-  
ցէն, մանաւանդ որ գործն ալ տափակ ու  
միօրինակ կը գտնար, ինք՝ որ սկսած էր  
արդէն յօդուածներ հրատարակել Արեւելի  
մէջ: Այսօր չեմ գիտեր թէ ինչ եղած է ան  
կեանքի պայքարին մէջ, ի՞նչ դիրք գրաւած  
է գործի աշխարհին մէջ: Լուր մը չունիմ  
իրմէն: Ատիկա արդէն բաւական բան կը  
զուրցէ իր մասին: Իսկ գրականութեան մէջ  
առաջին այդ յօդուածներէն ետքը, մութին  
մէջ կորսուած է իր անունը: Ես իրմէն գրե-  
թէ տասը տարի վերջն է որ գրիչ առած եմ  
ձեռքս: Ուշ մնացած ըլլալուս համար չէր որ  
պիտի գլջայի, եթէ երբեք գլջալ հարկ ըլ-  
լար: Աս կէտը, արդէն շատ աղէկ բացատ-  
րած է բարեկամս՝ հաճախորդին Մէրսէտէս,  
Մաւիսի նախորդ թիւերէն մէկուն մէջ:

Ձերկարեմ: Ճիշդ երեք ամիս ետքը ան  
ճամբուեցաւ. ես ամսականի անցայ: Թէ ի՞նչ-  
պէս, երկար ու աւելորդ կ'ըլլայ պատմել

հիմա հոս , մանաւանդ որ թերեւս անապար-  
ծութիւն ալ մտնայ մէջը , բանի մը համար  
որ չ'արժէր : Սաչափ ըսեմ որ աշխատելու ,  
սորվելու խանութ մեծ էր եւ այնչափ աւելի  
կը սրտապնդուէր որչափ կը դժայի որ կարեւ-  
ւորութենէ զուրկ ու անտեսուած էի , խա-  
թեր համար միայն քիչ մը ատեն վար դր-  
ուած : Միեւնոյն ատեն կը դժայի սակայն որ,  
երկուքնուս մէջ՝ քննական բաղդատութիւն  
մը ընելու վրայ էին միշտ , մեր մեծերը :  
Ազկից չէր որ պիտի վախնայի , մանաւանդ  
որ ըսի թէ , . դէմինս արդէն իսկ ջլատուած  
էր եւ համ չէր առներ գործէն : Իտէալ ու-  
նէր , Երազմեր կը թաւալցընէր միտքին մէ-  
ջէն եւ մէկէն ի մէկ հարստանալու միջոցնե-  
րուն վրայ կը խորհէր միշտ : Յանձնարարուած  
գործ մը կատարել լինցընելէն ետքը , գլու-  
խը կախած , ճակատը ասիւն մէջ , կը խոկար ,  
կամ նեղ սենեակին մէջ վերվար , գետինը կը  
չափէր , երազելով , ձեռքերը՝ տափաթին  
գրպանին մէջ : Ես , թերեւս կարգ մը լայնա-  
խոհներու ու վսեմ զգացումներով օժտուած  
պարոններու ջիղերուն դպչիմ , սա խոստովա-  
նութիւնովս թէ չունէի միտքի միեւնոյն լայն  
հորիզոնները : Պարագ չէի կրնար կենալ սո-  
կայն կամ երազել , եւ ատոր համար , երբ  
ուրիշ ընելիք մը չունենայի , ամենէն ոչինչ ,  
ամենէն ծառայական բանը ընել ստորնութիւն  
մը չէի սեպեր ինքզինքիս , կը բաւէ որ գործ  
մը ըլլար տեսածս :

— Օննիկ , սըվկէց խահվէ մը ըսէ՛...

— Ծա'տ աղէկ , էֆէնիտի :

Մտելուս , պարագ կենա՞լ չուղելուս թէ  
օգտակար գործ մը կատարելուն մէջ պղտի-  
կութիւն մը չի տեսնալուս համար էր որ ,  
միշտ ինքնարեւարար , վառարանը փայտ կը  
նետէի որչափ՝ ատեն որ սենեկի ծառան հոն  
չըլլար եւ կամ գործով մը տեղ զրկուած ըլ-  
լար : Ահագին քանակութիւնով տեղ տեղ ,  
ասպին անդին , գետինները , սեղաններու վը-  
րայ խառնիխուռն , գոյնզգոյն , ցրցընուած ,  
դարակներու , անտուկներու , պատուհանի  
բացուած քննրու մէջ խճողուած , աղբանքի  
կտորուանք , նմոյշներ , ֆաթուրաներ կար-  
գի գնել , մաքրել , փոշիները առնել , չտիկել  
էր մեծ հոգս , որչափ ատեն որ ուրիշ ընելիք

մը չունենայի : Իսկ տետրակները , հետեւ  
միօրինակ գտնալէ , ընդհակառակը շատ հա-  
ճոյալի կը թուէին ինծի , որովհետեւ չափա-  
գիտութեան մասնաւոր հակում մը ունենա-  
լուս՝ կը յիշեմ լաւագոյն նոթերս առած ըլ-  
լալ այդ ճիւղին մէջ , դպրոցը : Այսչափ բան  
պատմելուս նպատակը ուրիշ բան չէր , եթէ  
ոչ հոս գալ : Այդ ֆաթուրաները խուզարկած ,  
կարգի դրած , մաքրած պահուս էր որ դա-  
րակի մը ամենէն մութ , ամենէն հեռուորու  
անտեսանելի մէկ խորշին մէջէն դուրս հանե-  
ցի դեղին կողքով ֆրանսերէն հատոր մը , որ  
հոն պահուած էր , կ'երեւայ , դիտմամբ ու  
խնամով եւ որ հոն մոռցուած էր : Եւ եթէ  
ես գայն չի հանէի իր տասը տարուան այդ  
թաքստոցէն , թերեւս մինչեւ այսօր ալ հոն  
մնացած ըլլար , այնչափ անփոփոխ եղած է  
իրերուն վիճակը , անկից ի վեր , այդ սեն-  
եակին մէջ : Հատորին վրայ , հեղինակին ա-  
նունը Emile Zola. գիրքին անունը La terre էր  
Քիչ մը թղթատեցի : Բնաւ գաղափար չունէի  
ո՛չ հեղինակին , ո՛չ ալ իր այդ գործին վրայ :  
Չէի նախապաշարուած ոչ նպատաւոր , ոչ  
աննպաստ կերպով , ո՛չ հատորին եւ ո՛չ ալ  
գրողին նկատմամբ : Քիչ մըն ալ թղթատեցի  
եւ գտայ որ շահեկան ըլլալ կը խոստանար :  
Ճաշերուս ատեն կամ առտուները շատ կա-  
նուռ , մարդ չեկած դեռ , գաղտուկ մը մէջէն  
դուրսէն քանի մը էջեր կարդացի : Առաջին  
գաղղիներէն , առաջին իրապաշտ , ու առաջին  
վէպն էր զոր ձեռք անցուցած էի , եւ կար-  
գալու գրեթէ սկսած : Եւ իրապաշտ վէպե-  
րուն ալ ամենէն իրապաշտը , ամենէն սոսկա-  
լին , ոչ ոք կրնայ հակառակը պնդել , այն-  
չափ դուք , որչափ՝ ես :

Երկու օր վերջը առաջին գրագիրին ներ-  
կայացայ եւ վճարէն ըսի .

— Գիրք մը գտայ ֆաթուրաներուն տա-  
կէն գոր ձեզի պիտի յանձնեմ , մէկ պայմա-  
նով մը սակայն : Կարդալէս ետքը . . .

— Ի՞նչ գիրք է որ :

— La terre , Հեղինակ Zola Emile :

— Ո՞վ է եղեր ադ որ :

— Ես ալ չեմ գիտեր իրաւ որ :

— Ինչ կ'ուղես ան ըրէ : Ընդհանուր ադ-  
բանքին հարկւրաւորներուն մէջը տարբերու-



թիւն մը կայ, զուլս ճաթեցաւ փնտռելէն : Ան նայինք . . .

Յորեկները յոգնած, բթացած, գիշերները անքուն կ'անցընէի La terre կարդալով : Դժուարութիւն կը քաշէի հասկնալու : մանաւանդ վէպին գործողութիւնը չըջանալիոյ նկարագրութիւնները անվերջանալի կը գտնէի : Բայց վէպին նիւթը ու մանրամասնութիւնը քննարկելու մէջ բռնած էին կարծես հետաքրքրութիւնս : Երբոր լմնցաւ, զարմացած, զարնուած, շացած էի : Եթէ Զօլա զիս տեսնար այդ պահուն, հաւանօքն ինքն իսկ խրատէր ինձի La terreէն չսկսիլ իր Ռուօն Մաքառական շարքին ընթերցումը եւ էն ետքի ձգել զայն : Բայց ես արդէն իսկ զղջալու վրայ էի, կարգ մը երկարածիդ նկարագրականներուն վրայէն ցատքած ըլլալու համար : Անգամ մըն ալ սկսայ : Այս անգամ վէպին նիւթէն աւելի, գրական գեղեցկութիւնն էր դործին որ կը յայանուէր ինձի : Դիտողութիւններուն գիտական ճշգրտութիւնը, իրերուն ու դէպքերուն հիւսնալի կապակցութիւնը, միջավայրին մանրազնին ուսումնասիրութիւնը կը ցուէին միտքիս առջեւ եւ հաճօք մը կը զգայի կանգ առնելով անոնց ամէն մէկին առջեւ : Հորիզոն մը կը պարզուէր՝ նոր լոյս տեսնող աչքերուս առջեւ : Դպրոցին մէջ բովանդակ հոստորութիւնը կլլած եւ Հիւսօէն ու Պանիլիէն քանի մը թարգմանութիւններ միայն կարդացած էինք : Աւելորդ է ըսել որ, հատորը առաջին գրագիրին յանձնելէ առաջ երբորք ընթերցում մըն ալ շատ չի գտայ ես ինձի, մանաւանդ անգիտակցօրէն չեղանելու, ամբաղնդելու համար կարծես, սոսկումի, պզգանքի ու փախուստի այն զգացումներս զորս կ'ունենայի Պիլթոյի մը վայրագ ու մոլի, գորշ ու բռնի արարքներուն հանդէպ : Զօլայի այդ վէպը անոր ամենէն գրգռիչ, ամենէն լկաի արտադրութիւնը կը նկատեն շատեր, եւ նոյն իսկ իր կուսակիցներէն շատեր կ'ընդունին որ ամէն տղու ձեռք պէտք է ձգել զայն եւ խելահասներու միայն յատուկ է, ինչպէս քերականութիւններ կան որոնք «Զարգացելոց» են միայն : Խորհելով, թերեւս ես՝ ալ իրաւունք տայի իրենց : Բայց փորձը իրականութեան մէջ ճիշդ հակառակ

արդիւնք տուաւ : Տրամաբանութեան ուրիշ բան չէր մնար ուրեմն ընելիք, բայց եթէ տեղը նստիլ : Այդ թուականին ալ, ինչպէս շատ առաջ, ինչպէս նաեւ հիմա իսկ, ամէնքս ալ ճամբուն մէջ էինք Երեսի մը՝ որուն մասին Մալիս ու Ծաղիկ, շատ չընեք դեռ, հաւասարապէս ճակատարաց, յայտնեցին իրենց կարծիքը առանց կեղծ ամօթի կամ յանցաւարտ լռութեան : «Կիւսթաւ»ի պէս գիրքեր ու աւելի գէշ պատկերներ, դարակներու մէջէն մասնաւոր ճամբաներ ունէին ձեռքէ ձեռք պարտելու համար : Իմ մասիս, ես կրնամ հաւաստել որ, դեռաւոր, տղայ մը դեռ գրեթէ, անբարոյական Զօլային ամենէն լպիրշ նկատուած այդ գիրքը ամենէն բարոյական հակադրեցութիւնը առաջ բերաւ վրաս : Այդ վայրկեանէն դադրեցայ, միակա կամ գիշերները, ոսկեզօծուած թուանոր երազներ հիւսելէ, ինձի անձանթ բաներու վրայ, զորս Զօլա այնքան տմարդիօրէն աչքիս առջեւ կը պարզէր, ցնցելով զիս, դարչեցնելով, վախ ազդելով : Անկէ վերջը, միաշար իր քսան հատորները լսիցի քանի մը անգամներ, առանց մէկ անգամ մը իսկ գրգռուելու, յոռի մտածում մը կամ շարժում մը ունենալու : Ընդհակառակը, բոլոր ուժովս կը պնդեմ որ, ձեռքէս բռնած հեռագրէս կը հեռացնէին զիս անոնք ճամբէ մը որ կրնար աղետարներ ըլլալ ինձի, ինչպէս եղած է ու կ'ըլլայ դեռ շատերու : Եւ աւելի ետքերը, իր քննադատական հատորներովը, իրապաշտ գրականութեան ոգիին ու մէթոտին զիս առաջին անգամ միջամուխ ընելէ շատ աւելի, այդ տեսակէտով է որ երախտապարտ կը մնամ իրեն : Որ եւ է ուրիշ բան կարդալէ առաջ իր մօտաւորապէս քառասուն հատորները, կրկին կրկին, կամաց կամաց, ուսումնասիրելով, իւրացնելով, ծած ըլլալով, երբոր շատ բան կը պարտիմ իրեն, իւր գրական ծնողք մը, անկարելի է ինձ չողջունել զայն ու չի խոնարհել անոր առջեւ, իբր բարոյապէս ալ հայր մը :

Առաջին անգամ ինք կը ցանէր ընթերցումի հունտերը միտքիս մէջ եւ գրական փորձառութեան մը տէր կ'ընէր զիս իր գրական քննադատականներովը, որոնք ամէն սկսնակի համար, թանկագին ուղեցոյցներ են, հակա-

ռակ իրենց թանձրութիւններուն, խստութիւններուն, թերութիւններուն : Իր վէպերը, իր գրական դաւանանքի գործադրութիւնը կուգային պարզել տղայ ու անմշակ երեւակայութեան առջեւ եւ կեանքին տակերը, կեղծիքները, ստութիւնները կը մատնանշէին, աշխարհի պատմութիւնն ու գիտակցութիւնը սորվեցնելով ինծի : Առաջին շահած ջնջին դրամներս իր գիրքերուն համար եղան : Այլ անկից վերջը կարդալը մոլութիւն մը եղա : Մոլութիւններուն էն ներկերն ու հաճելին : Ալքոլէն ու սիկառէն այրող իր հերսսին պատմութիւնը, որչափ ալ քիչ բնական համարուի կարգ մը գիտուն—քննադատներու կողմէն, բաւեց ինծի, ալքոլէն ու ծխախոտէն հետեւինալու եւ միմիայն անոնց վատնուելիք գրամին խնայողութիւնսովը, ակնկալածէս շատ աւելի գիրքեր գնելու համար, մէկդի ձգելով առողջութեանս ըրած շահը : Նախնի շուտով հետեւեցաւ Հոգըին եւ պչրուհիի մը կեանքին բովանդակ յայտնի ու թաքուն, լիկած ու փայլուն պատկերներուն առղանցութիւնը ունեցայ աչքերուս առջեւ : Աստուառը գինեռունին գարշաւքը պոռթկացուց միաքիս մէջ, Բո—Պոլը սուտ պարկեշտութիւններու, երեսօտառ façadներու կեղծիքները կը քակէր մէկիկ, մէկիկ : Այլ աւելորդ կը նկատեմ շարունակել : Շարքը շատ երկայն է եւ յետոյ ան, մէկէ աւելի անդամներ énuméré եղած է, կարճ պիտակներով, մեր թերթերուն մէջ : Մէկ թարգմանութիւն մը հազար թուադրումէ աւելի պիտի արժէր : Զօլայի բոլոր գործերը, ինչպէս նաեւ բոլոր ծանօթ ամէն ազգի՝ զբոսողներուն գործերը իտալերէնի թարգմանուած են այսօր եւ  $3\frac{1}{2}$  ֆրանքի տեղ 1 ֆրանք միայն կ'արժեն հոս : Ասոր համար է որ զարմանք մը չեմ իմանար, երբոր կը տեսնամ որ իտալական գրականութիւնը, զօրաւորապէս պատուաւորուած, ժողովրդականացած է հոս եւ մեծ քաղեր անելու վրայ, յառաջդիմութեան ճամբուն մէջ :

Եւ կրկնապէս, հայր մը կորսնցուցածի պէս խոր կը խոցուիմ, երբոր լրաղիրին մէջ յանկարծ, մեծ մարդուն, Զօլայիս, յեղակարծ, անհաւատալի մահը կը կարդամ : Մարդկութեան համար բարբառող, անոր բարիքին խոր-


հող աշխատող, հոգի տուող, գթութեան այդ առաքելալը, ինկածներուն պաշտպանը, նոր հաւատքին աւետարանիչը, ապագային դուշակը, զրիչը ու զուխը հոված, Արդատաւորութեան, Աշխատութեան, Ճշմարտութեան ու Արդարութեան քսաներորդ զարեան այս նորօրինակ աւետարանին վրայ, անմահը, — ո՛չ ահաղէմի մը շինծ ու ու վաղամեռ անմահ մը, — կը մեռնի, սրտակեղիք, անարդար, վայրադ մահով մը : Եւ ի՞նչ ջնջին բանէ մը կախուած կը մնայ մեծ վկայագիրին, մեծ խորհողին, մեծ մարդասէրին թանկագին կեանքին թելը : Ո՛վ դիւրարեկութիւն մարդկային կեանքի : Սպասուհիին երկու ժամ առաջ վեր եկած ատենը, առանց վարանելու դուռը բացած ըլլալովը կամ իրեն՝ Զօլային, մահուան սողողութեամբ զգալով իր կուրծքին տակ՝ պատուհանը բանալու համար տեղէն ելած եւ գետինը ինկած չըլլալովը, ըսե՛լ թէ հիմա ողջ պիտի ըլլար ան դեռ իր գթախոտ ու անմխիթար այրիին պէս : Ինք որ այնքան քստմնասարսուռ մահեր նկարագրած ու բերեղացուցած է իր շքեղ էջերուն մէջը, կրցա՞ւ արդեօք իր վերջին վայրկեաններուն, մահուան հետ իր հուսկ պայքարին մէջ անդարդառնալ իր անագորոյն վերջաւորութեանը, աւելի ընդվզեցնող քան Նանայի ծաղկաւեր, վէրքոտ ու թարախալից մահը, աւելի յոռի, սպառող ու հերինող քան հրկիզումը ու մոխրացումը իր սեռական սրկառէն բռնկած ալքօրիքին : Եւ անկարելի է ըլլայ ինծի, համաշխարհային համակրութեան ու անձնական կսկիծիս մէջ, զայրոյթ մը զսպել խնդ Տէրութեաներու, ապուշ Տրեմօններու, մոլեռանդ Քօփէներու վսմակին դէմ, որոնք իրենց թռնաւոր մաղձը կը թքեն անոր պատկառելի ու ծաղկափրեռ զագաղին վրայ եւ մեծ հանգուցեալին դժբախտ այդ արկածին մէջ կուգեն տեսնալ պատիժ մը՝ իրենց հակառակօրդ մը եղած ըլլալուն, եւ անձնասպանութիւն մը՝ իրր թէ իր արատադրած աղտոտ գործերէն նոյն իսկ ինք նողկանք եւ յուսահատութիւն զգացած ըլլալուն համար : Ազատ՝ իր ամենէն թաքնալից, ամենէն վճիռ, սիրով ու դուրսով բարբառուն վիթխարի դործը : Նողկանք ու զղջում՝ իրեն, երբ աշխարհ համօրէն կը խոնարհի անոր անմեռ յիշատակին առջեւ, հիացիկ, պաշտանքոտ ու զլիարաց :

Ճեմովա

Օ. ՉԻՖԹԷՆՍԱՐՍԻ



## ՏՈՒՆԻՍ ԶԱՄԲԱՆ



ԼԻԲԱՆԱՆԷՆ ՈՒ ՎՈՍՓՈՐԷՆ

ՇԱՏ ԱՆԴԻՆԵՐԸ

(ՊԶՏԻԿ ՆԵՇԵՐ)

Անիծեալ ըլլայ ծովը՝ որ փոթորկեցաւ :  
Դէպի Սամսոն երթալու համար նաւը Վոս-  
փորի չքնաղ գիշերուան սպասեց : Շատ ան-  
գամ չէր որ Լիբանանը թողելէս ետքը՝ մին-  
չեւ Վերին Վոսփոր կարող կ'ըլլայի երթալ :  
Պէտքը-տէրէյի կուշտէն բարձրացող շագա-  
նակի խիտ անտառակներուն մաքուր ջուրն  
ու հրճուանքը վայելելու համար : Իօնիսն —  
իմ նաւս — անգամ մըն ալ տարաւ իս գիշեր-  
ներուն այն շողշողուն լոյսերովը որոնցմով  
կը պծեն ինքզինքնին գիւղ-հարսերը երկ-  
կողմի Վոսփորին :

Ու այդ նաւը սակայն ալ չ'պիտի վերա-  
դարձնէ իս հոն՝ ուր բարեկամ սիրող զէմքե-  
րու մօտ քանի մը ամիսներու իմ կեանքս  
յիշատակներուն էն ազնիւներէն ծրարեց իր  
մէջ, ու անմոռիկ կ'ընէր զրոյմեց ճակտիս  
պիշ պիշ նայող այն աչքերուն՝ որոնց սէր էր  
հոգին, ու օրհնեալ անունը :

Ինչո՞ւ կ'երգես Լիբանանդ, կ'ըսէին ինծի  
շատ անգամ իմ հետաքրքիր բարեկամներս,  
եւ ինչո՞ւ կ'արցնոտես աչքերդ կուսութիւն-  
ներու այդ յաւերժական հանդիպաւայրին  
տենչանքովը : Զգէ՛ ալ մի գրեւ... :

Դուք տեսա՞ք վայրի եղնորթները Լիբա-  
նանին, հազարաւոր ակերէ պղկացող ջուրե-  
րը, որոնք կաղնիի ու ձիթենիի անտառնե-  
րուն մէջ իրար կը միանան օծի ճամբով գե-  
տեր չիմելու համար : Ու յաւերժական  
պին գեղեցիկները որոնք Դարերու պէտք չու-  
նին այլափոխուելու կամ սղեղնալու համար :

Բայց Վոսփորը հրաշալի է : Կապոյտի  
այդ բարակ ու ինքզինքը հանգրիճող երկը,  
որ Մարմարայէն կըսկըսի մինչեւ Սեւ ծով,  
Պարպիւղի ու Պէտքեմէրէյի միջեւ գեղե-  
րու անտառ շարք մը ստեղծելով երկու եզերք-  
ներու վրայ զէմքիմաց իրարու աչքի մէջ  
նայող :

Մանուկ մըն էի իմ հօրենական երդիքիս  
ներքեւ երբոր Եգիպտոս ու Թէրզեանը իրենց  
խանդոտ օրերուն Վոսփորի անունովը բա-  
նաստեղծեցին, հիմակ կը հաւատամ ես իրենց  
ու հիմակ մանաւանդ իրաւունք կուտամ հէգ  
Եգիպտին, որ յաւերժական երգիչն է մեր  
մէջ գոյներուն մէջ կապոյտին՝ որ Վոսփո-  
րինն է սակայն :

\*\*\*

Սեւ, սեւ, սեւ էր ծովը իրապէս, ա-  
նունին պէս սեւ : Երբոր հատաւ եզերքը  
Վոսփորին, ու ճրագներու լոյսը հեռո՞ւն հե-  
ռո՞ւն մնացին աչքերու անտեսանելի, ծովը  
սկսաւ իր երգին, որ կատաղի շունչ մըն էր  
սակայն, փոթորկէն ծեծուած ալիքներուն  
լացը պարզապէս :

Գլուխս վեր չ'ուռի մահիճիս վրայէն, ու  
ոտքս դուրս չ'ըրցի նետել խցիկէս, ծովը գա-  
մեց իս գետին, ու ծովախտը պրկեց ոլորեց  
աղիքներս, ու կուրծքիս ներքեւէն ամէն  
բան դուրս պոռթկալու անգուլթ միտումները  
կը ցուցնէին :

Անիծեալ ըլլայ ծովը որ փոթորկեցաւ :  
Ծովերուն երկինքը կ'ուզէի դիտել ես, ու  
ծովերուն լուսինը : Մահուան վախը հեռու  
չէր ինծմէ, ու զգայազիրկ երբ փռուած էի,  
յիշեցի ես սիրելիներ որոնք հեռուէն ինծի  
կըսպասէին : Մայրս որ իմ կարօտս ունեցած  
էր թաշկինակը ձեռքերուն մէջ, Ու Նէլլին  
... ենովք :

Երկուշաբթի իրիկուան նաւը չորեքշաբթի  
արշալոյսին Սամսոնի մօտեցաւ : Ու ես կրցի  
անգամ մըն ալ շնչել, գերեզմանային կեան-  
քէ մի հտքը :

Սիրուն է քաղաքը իր արտաքին հայեց-  
ուածքին մէջ, սակայն աչքառու քիչ բան  
կը ցուցնէ իր ներքինին մէջ :

Պաղատաի ու Փոքր Ասիայի ներքնագա-  
ւառներուն յայտնի նաւահանգիստը, ուրկէ  
սակայն վաճառականական տեսակէտով մեծ-  
կակ գործ մը կը սարքուի տարուէ տարի :

Գալի տեսայ մեր եկեղեցին ու երկսեռ  
Նէրսէսեան վարժարանը :

Յակոբ Աշոտ Սրբազանը հոն չ'ըրցի գտնել  
սակայն, Իւնիա գացեր է մէկ քանի օրուան  
համար : Իսկ տեղապահ Տէր Հայրը կէս օր-

ուան ճաշին գացած ըլլալուն՝ ան ալ տեսնել անկարելի եղաւ, սակայն աս բոլոր տեսնել—չտեսնելները անոր համար որ քիչ մը գաղափար առնել կ'ուզէի մեր ժողովուրդին կեանքէն : Ըսեմ անմիջապէս որ պարօցը, որ չորս հարիւրի մօտ աշակերտներ ունէր ըսուեցաւ ինծի, լարեկարգութեան տեսակէտով բաւական մը յատկանշելի կողմեր ունէր : Ու արդէն հազիւ չորս հարիւր տուն մը հաշուող մեր համայնքին համար դպրոցի քիչ չափ փոյթեռանդութիւնը աչքի գարնող տեղը կը բռնէ, քանի որ նիւթական աւելի լաւ պայմաններու մէջ գտնուող ուրիշ տեղերու բազմութիւ ազգայինները այսքան մը իսկ ընելու ազնիւ արամադրութիւնները չեն կրցած ունենալ :

Ծովէն ծեծուած մարմինս քիչ մը կաղ-դուրելու համար հարկը կը տեսնեմ որ մը սպասել Սամսոն : Ու հենց վաղը կառքը պիտի փոխադրէ իս օրերով ու շարաթներով այն ճամբուն վրայէն դէպի հոն, ուր իմ բնա-գաւառս կը կենայ :

Թերեւս ըսելիքներ ունենամ յաջորդ եւ միւս անգամներուն համար :

Կը տեսնուինք ուրեմն, եթէ կը հաճիք :

ԽՈՍՐՈՎ ՔԷՇԻՇԵԱՆ

Սամսոն, 31 հոկ 1902

## ՉԱՄՈՒՍՆԱՑՈՂՆԵՐԸ

Ամերիկացի երազարակագրի մը հայեացքները չամուսնացողներու կեանքին մասին :

Եթէ մէկը հաւատարմօրէն հետեւի ամե-րիկեան Մամուլին հրատարակութիւններուն, հետաքրքրական է տեսնել որ, ո՛րչափ կը խօսուի չամուսնացող մարդոց եւ կիներու վրայ : Կար ժամանակ մը, երբ պատահա-րար կըլլար այս խնդրին խօսքը : Բայց այ-սօր, առանց անոր ամիս չանցնիլ : Վերջին տեսններս, նոյն իսկ սովորականէն լայն ու շաղրութեան առարկայ դարձած է ան . այդ ուշադրութեան հանգամանքը յատկանշական կերպով մը փոխուած է : Ատենով, պաղա-րէնով կը վիճաբանուէր խնդրը թեր ուղէմ, — մասնաւորաբար նիւթին գեղեցկութեան

համար : Մինչդեռ հիմա չամուսնացող մարդը կամ կինը կը պարտաւորի, յարձակում կը կրէ, եւ նոյն իսկ խնդիր եղաւ որ՝ ամէն ա-մուրի տուրքի ենթարկուի :

\*

Բոլոր այս վէճերուն եզրակացութիւնը սա ըլլալ կը թուի թէ՛ ամուրիութիւնը աճե-լու վրայ է, Ամերիկայի մէջ, եւ բնականօ-րէն, փոխադարձաբար, ամուսնութիւնն ալ նուազելու : Առաւել կամ նուազ հաւատարիմ պատմութիւններ կ'ըլլուն, արիւնքներ կը ներկայացուին, հաստատուել համար այս իրա-դութիւնները, եւ ամուրիներու վրայ կղած քննադատութիւններուն ընդհանուր ձգտումն է՝ ջայտացնել ամուրիութեան աճումին սար-սափելի պարագան, եւ անոր մասին բան մը ըլլուելու անհրաժեշտութիւնը : Քանի որ տակաւին գործնական ո՛չ մէկ լուծում առաջ եկած է այս մասին, մինչեւ հիմա, եւ յուսալի ալ չէ որ գայ, հետեւաբար, բնական է որ, կարելի չէ սահմանել օրէնք մը որ ամու-րիները ամուսնանալու դատապարտէ, երբ անոնք չեն ուզեր ընել այդ բանը : Ամուրի-ութեան վրայ տուրք մը նմանապէս անի-մաստ պիտի ըլլար, չըսելու համար անճոռ-նիութիւն մը : Այսպէս, խնդիրը անյողդող կերպով սա է ուրեմն որ, ամուրիները, — ա-նոնք թիւով բազմանան կամ նուազին, — ի-րենց ճամբան պիտի երթան :

\*

Ուշադրաւ կէտ մը որ կայ այս խնդրին մէջ, ան ալ սա է թէ, կը դիտուի որ չա-մուսնացողներու թիւին աճումը ընկերային ընթերցանութեան պայման մըն է, որ կ'ընկերանայ հասարակութեան մը յառաջդիմութեան հետ : Հաստատուած իրողութիւն մըն է ալ որ, հասարակութիւն մը որչափ կ'օժտուի բաղդա-ւորութիւններով եւ հարստութիւնով, ամուս-նութիւնը, այդ ազդին մէջ, աս կամ նա պատճառին համար, կը նուազի աստիճանա-բար : Եւ երբ հասարակութիւն մը մանուկ է դեռ եւ զինքը կաղմոզ անհատները դէպի քաղաքակրթութեան ճամբան դիմող աշակի-րաններ են, ու իրենց ապրուստը կը ճարեն



ամենադժուարին գործերով, զրկանքներով ու տառապանքներով, այդ համայնքին մէջ, ամուսնացողներու թիւը բարձր աստիճանի մը կը հասնի։ Իրաւ է որ դժուար է երեւակա- լել թէ, ի՞նչպէս կըլլայ որ մարդը կամ կինը դժուարին գործերու մէջ գտնուած ատեն ա- լելի կըզգան պէտքը սէրին կամ ընկերակցու- թեանը, սակայն պատճառը ի՞նչ որ ալ ըլլայ, ասոր ասանկ ըլլալը ապացոյցուած է, եւ ի- րողութիւնները մէջտեղն են։ Ամուսնութեան բազմաթիւ նիշը՝ գործաւոր դասակարգին սոու- լին իտալին մէջ կարելի է գտնել այսօր, եւ քանի բարձրահանք հանգստաւէտութեան ու զիւրակցութեան սանդուղին վրայ, ատ թի-ւը հետզհետէ կ'իջնէ։

\*

Իրերու նոյն կացութիւնն է որ ի յայտ կուգայ, երբ նկատի առնենք ընտանիքնե- րու խնդիրը։ Բազմաւնգամ ընտանիքները, զրեթէ անփոփոխելի կերպով, գործաւոր դասակարգին մէջ կը գտնուին։ Ծնունդնե- րու թիւը՝ մասնաւորապէս աշխատող դասա- կարգէն վեր եղող դասերուն մէջ է որ աս- տիճանաբար նուազած է Ամերիկայի մէջ, վերջին քսան տարիներու ընթացքին։ Կատա- լիկապէս բնական է որ՝ ընտանիքի մը հասոյ- թը աւելնալուն հետ, ծնողքներու տրամա- ղութիւնն ալ զիւրաւ ոլորտի հաշտուէր ի- լանց բազմաւնգամ ընտանիքը ապրեցնելու խնդիրին հետ։ Սակայն ճշմարտութիւնը կա- տարեկապէս հակառակն է՝ երեւութապէս տրամաբանական թուող այս երթագրութեան Առէք դեռ դար մը առաջ ապրող քանի մը ինչ բազմաւնգամ ընտանիքներ։

Ձանոնք ուսումնասիրելով՝ պիտի տեսնէք թէ, ի՞նչպէս իւրաքանչիւր սերունդի հետ, անոնց անդամներուն թիւը կը նուազի աս- տիճանաբար, մինչեւ որ անոնցմէ մէկ քանին ըտրորովին կ'անցայտանան։ Քայլ մը աւելի մօտենանք դէպի մօտ ժամանակները, ու պիտի տեսնենք՝ որ օտար ծնողք ունե- ցող ամերիկացիներու դասակարգին է որ՝ ծնունդներու թիւի տեսակէտէն՝ էն մեծ նուազումը ցոյց կուտայ։ Ասոնց ծնողքները բազմաւնգամ ընտանիքներ ունէին։ Իրենք

սակայն միջին հաշուով հազիւ թէ երկու զա-ւակ ունին։ Ամերիկայի մէջ, այն ընտանիք- ները որոնք շատ մը տղաքներ ունին, անոնք են՝ որոնք օտար երկիրներէ գաղթած են։ Իրողութիւնը սա՛ է որ, Ամերիկացին բազ- մաւնգամ ընտանիք կազմող չէ։ Բայց բոլոր ասոնց՝ ամերիկացի հայրը կամ մայրը չէ պա- տասխանատուն։ Ասոնցմէ մէկը կամ միւսը ճիշդ նոյնն են, ինչ որ են ուրիշ ազգերու էրիկ-մարդերը կամ կնիկ-մարդերը։ Այս փո- փոխութիւնը՝ իրենց «պզտիկ յարկը» կազմող էրիկ-կնկան հետ ի յայտ կուգայ ամէնէն ա-ռաջ, ու կը շարունակուի մինչեւ հոն, ուր կը գտնենք էն փոքրաթիւ ընտանիքը։ Ասի-կա աշխարհի սերունդներու փոխակերպու- թեան պատմութիւնը եղած է, ու հիմա Ա-մերիկայինը ըլլալ կըսկսի։

Բնութիւնը իր վրէժը կը լուծէ մարդէն,

\*

Իրերու այս բնական կացութիւնը կարծես պարտականութիւն պիտի դնէր մեր վրայ, չափաւորելու մեր յարձակումի դիրքը, ու մեր նախատինքը, հանդէպ չամուսնացող մարդուն կամ կնկան, քանի որ, անխուսա- փելի կերպով, մենք ալ դատապարտուած ենք ապագային մէջ անոնցմէ աւելի մեծ թիւ մը ունենալու, մասնաւորապէս որ, երբ մարդ մը կը նախընտրէ չամուսնանալ, ան- պատճառ ատկէ չհետեւիր թէ՛ պէտք է հան- րութեան կարծիքին առջեւ նախատուի, ապ- տակուի ու ձաղկուի ան, իբր անդգամ մը, կամ տկարամիտ մը։ Ընդհակառակը, արդի կեանքին հերոսներուն մէկ մեծ մասը կը կազմէ ընկերութեան այն հատուածը՝ որ ա- մուրի՛ կեանքը կ'ապրի։ Ծիշդ է որ՝ երբ մարդ մը քառասուն տարեկանին կը հասնի, առանց ամուսնանալու, ընդհանրապէս մաս- նաւոր պատճառ մը կայ իր ամուրի մնալուն, պատճառ մը՝ որուն սաղմն է յաճախ գեղե- ցիկ պատմութիւն մը՝ անձնազոհ նուիրման եւ կամ մարդու մը այն բարձր յատկութիւն- ներուն, որոնք այնքան ատեն որ սիրտի հետ գործ ունին, խորին ակնածանքի մը արժա- նի են։

Մեծ մասով, կիներուն տրուած է առանց փոխաբիւնութեան . . . սիրելու ու իրենց ամ-

բողջ կեանքին մէջ այդ սէրին հաւատարիմ մնալու գերբնական կարողութիւնը : Այդ բանը կարգ մը մարդիկ ալ ունին : Հաղուատեալ է անանկ մէկը , որ իր ամուրի եղած ատենը՝ տեսնելով զեռաւոր մայր մը ու տղէկ մը՝ չբաղձայ անոնց իբր ըլլալուն , օր մը , քանի որ անոնք խտէալ մը պիտի թուին իրեն , Ու երբ այդ խտէալը պարզապէս խտէալ մը մնայ իրեն , եւ իրականացում չգտնէ , ատոր պատճառը ան չէ որ ինք միշտ ատանկ ուղած է : Շատ մը ամուրիներ կան՝ որոնց շատ մը ամուսնացողներ թո՛ղ յարգանքով բարձրացնեն իրենց գլխարկը , փոխանակ զանոնք քննադատելու համար գրիչին բարձրացնելու , — քանի որ ամուրիները քննադատել դարձակգրել սովորութիւն մը դարձած է հիմա :

\*

Նմանապէս չամուսնացած տարիքոտ կնոջ մը համար , սովորական բանաձեւ մը դարձած է ըսել թէ՛ «երեսը նայող չէ եղեր» : Տարակուսելի է որ կին մը՝ իր ամբողջ կեանքին մէջ , ունեցած չըլլայ ամուսնանալու առ նուազն մէկ առիթ մը . — ու ընդհանրապէս կիներու մեծ մասին կեանքը այս ճշմարտութիւնը կը հաստատէ , իրականութեան մէջ : Մարդ չգիտեր այս եղբերեզութիւնները՝ որոնք խոր կերպով թաղուած կը մնան կեանքերին առանց ամուսնանալու անցընող կիներու սիրտերուն մէջ : Ամենաքանչիւ պատմութիւնը , որուն վրայ կարելի ըլլայ հիանալի վէպ մը յօրինել , յաճախ մէկ մասը կը կազմէ կեանքի մը՝ զոր միջակ տարիքով շնորհալի կին մը կ'ապրի ճիշդ մեր մօտը : Կնոջ մը համար , անպատճառ ծերուկ մը ըլլալ պէտք չէ , ապրած ըլլալու համար անանկ կեանք մը՝ որ կարենայ գոհացում տալ ամէնէն կարող վիպասանին : Կեանքի չքեղ պատմութիւն մը ունենալու համար , միշտ ամբողջ կեանք մը չէ՝ որ պէտք կ'ըլլայ ապրիլ : Շատ անգամ ամբողջ կեանք մը մէկ գիշերուան մէջ կ'ապրուի : Երբ քննադատ մը գրիչը կը բարձրացնէ չամուսնացող կիներու դէմ գրելու համար , աղէկ կ'ըլլայ որ ան յիշէ թէ , այս կարգի կիներ , քննադատութեան չէ որ պէտք ունին , ոչ ալ վիրաւորող խօսքերու , այլ ամենախո-

րին ակնածանքի մը , զոր ամէնէն կնահաճոյ երիտասարդը կարենայ յայտնել :

Կիներ կան՝ որոնք այնչափ տառապած են մարդու մը ձեռքին մէջ , եւ կամ գերբնական այնչափ մեծ նուիրականութիւն մը ցոյց տուած են մէկու մը յիշատակին , — որ միակ բանը զոր մարդկութեան մնացած մասը կրնայ ընել իրենց՝ ատկէ ետքը՝ ուրիշ բան չէ բայց եթէ ամենախոր յարգանք :

Իրաւունքով ըսուած է որ , եթէ ամէն կին ինքզինքը պատասխանատու ճանչնար մարդու մը հոգիին , այն ատեն այս աշխարհը ապրելու շատ աւելի աղէկ տեղ մը պիտի ըլլար : Կիներ կան սակայն , որոնք ատկէ աւելին ալ ըրած են : Մէկէ աւելի կիներ կան , որոնք իրենց կեանքին պատմութեան փականքները սրտերնուն մէջ կ'զգուցնուի , աշխարհ նետուած ու հարիւրաւորներու ըրած են այն բարութիւնը , զոր իրենց կեանքին մէջ միայն մէկու մը ընել երազած են : Աշխարհային ամենապղտիկ չիջանականներ իսկ , իրենց մէջ ունին այդ տեսակ կիներ : Յուսախաբութիւնը իրաւ է որ երբեմն կը դառնացնէ կինը , բայց շատ անգամ կը սփոփէ ու կը զօրացնէ զայն , եւ կեանքի շառաւիղը ընդարձակ ասպարէզ մը կը բանայ անոր առջեւ : Ինչ որ կիներուն համար կ'ըսուի , նոյնը պէտք է հասկնալ նաեւ մարդուն համար : Չէ՞ք տեսած հօբար մը , որուն տուն գալուն մեծ հաճոյքով մը կը սպասեն պզտիկներ , ինչպէս պիտի ընէին իրենց հօրը :

\*

Այս խօսքերուն նպատակը սակայն , ոչ մէկ կերպով քաջալերել է մարդոց կամ կիներու ամուրի վիճակը : Ամէն մարդ գիտէ որ երկու սիրտերու միացումը խտէալ պայման մըն է մարդուն կամ կնոջ համար : Բայց չմոռնանք որ , մեղ ամէնուս տրուած չէ հասնիլ այդ խտէալ վիճակին : Եւ որովհետեւ մէկէ մէկ քանիները չեն յաջողիր այդ խտէալին հասնելու , ատրկա իրաւունք չիտար զիրենք քննադատելու կամ պարսաւելու : Կան անշուշտ պարագաներ , ուր ամուրիութիւնը ընտրուած է պարզապէս եսական շարժառիթներով : Այս պարագաները սակայն փոքրամասնութիւն



մը կը կազմեն : Թիւով շատ աւելի են այն պարագաները՝ ուր գեոաւոր կրն մը միայնակութիւնը կը նախնարէ , որովհետեւ ան չուզէր իր կեանքի ազատութիւնը կորսնցնել , եւ կան պարագաներ՝ ուր երկտասարդ մը կը զգայ թէ՛ չպիտի կրնայ ապրեցնել իր ընտրած ազնիւը , այն կերպով՝ որով ան կապրի իր հօրը տունը : Ասոնց հետ մէկտեղ սակայն , ամէն անգամ որ լսենք թէ աղջիկ մը չուզեր իր կեանքի ազատութիւնը կորսնցնել , բաւական վստահութեամբ կրնանք յուսադրել թէ՛ գեոյարմար մէկը պիտի հանդիպի իրեն : Հազուադիւրս բան է որ աղջիկ մը՝ բացէ ի բաց , առանց ո եւ է պատճառի մը , ամուսնական յարկէն դուրս կեանք մը ընտրէ : Անվիճելի է թէ , մեծ թիւ մը կը կազմեն այն պարագաները , ուր երկտասարդներ չեն ուզած ամուսնանալ , մինչեւ որ իրենց դրամական պիւտճէն թոյլ չէ տուած իրենց ընտրած աղջկան ձեռքը խնդրել : Շատ մը երկտասարդներ պիտի վարանէին , երթալ եւ ուղղակի ըսել աղջկան մը որ , իրենց քիչը իր հօր շատին տեղ ընդունի : Միտքի այս տրամադրութիւնը ցաւալի կը թուի ինծի , քանի որ երբ երկտասարդ մը այդ գիմուսը ընէր , աղջիկը պիտի կրնար լաւ մը հասկընալ իրերու կացութիւնը , եւ թերեւս պատրաստակամօրէն պիտի ուզէր քիչով բաւականանալ , կը բաւէր որ միայն առիթը տրուէր իրեն՝ իր տրամադրութիւնը պարզելու : Հարիւրաւոր երկտասարդներ կան այսօր՝ որոնք միեւնոյն անխառնութիւնը կը գործեն , հանդէպ այն աղջիկներուն , զորս կը սիրեն , բայց որոնց չեն ներկայացներ իրենց ամուսնութեան առաջարկը : Այսպէս , քմահաճ ընթացքով մը հարիւրաւոր երկտասարդներ , իրենց կեանքի երջանկութեան հետ է որ կը խաղան :

Մարդիկ պէտք ունին անհատական աւելի մեծ բաժնի մը , ասպետական այն ազնուութիւնէն , որ իրենց նախահայրերը կը յատկանիչէր , անոնց՝ իրարու հանդէպ ունեցած յարգանքութիւններուն մէջ , Ուրիշներու զգացումներուն հանդէպ տածուած քիչ մը տւելի փափկանկատութիւն , պիտի կրնար , կարգ մը տեսակէտներով , ապրելու արժանի՝ բան մը ընել կեանքը : Յաճախ կը մոռնանք մտա-

ծել թէ , մեր կեանքի տեսակէտը մի միայն մէկ հոգիի մը մէջ չպարփակուիր :

\*

Իբր վերջարան կրնանք ըսել որ , ո՛չ մէկերնուս գիտնալիք բանն է մարդու մը կամ կնոջ մը ամուսնանալ ուզելը կամ չուզելը : Այս խնդրին մէջ պէտք է քիչ մը աւելի լայն մտածող ըլլալ : Ըսելիք չի կայ , երբ ձեր սիրելի բարեկամներէն կամ բարեկամօրէններէն մէկուն հետ կը կատակէք , ամուսնացած չըլլալուն համար , որքան ատեն որ կատակի սահմանէն դուրս չեկէր ան : Նոյն իսկ ասանկ պարագայի մը մէջ , չենք կրնար պէտք եղածին չափ զգոյշ ըլլալ երբեմն , որովհետեւ կատակի զարնելով վիճակ մը — որուն ետեւ կրնայ պատմութիւն մը , յիշատակ մը կամ վէրք մը պահուած ըլլալ — նոյն իսկ մեր այդ կատակով թերեւս պատճառ կ'ըլլանք ատոնց դուռն վերարձարծումին :

Թէ որ կը պակսի մեր քով յարգանքի զգացումը՝ հանդէպ շամուսնացողներուն , գոնէ առարկայ չդարձնենք զիրենք պարսաւանքի : Ահա , վերջին խօսք մը : Ե.

## ՅՈՒՇԱՏԵՏՐ

Վեհ. Սուրբանին Ծննդեան Տարեդարձին առթիւ երկուշաբթի առաւօտ Մայր Եկեղեցւոյ մէջ գոհարանական հանդիսաւոր մաղթանքներ կատարուեցան նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր որ պարագային յարմար գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ : Ներկայ էին՝ քարոզիչ եպիսկոպոսներ ու վարդապետներ , վարչական Ժողովոց եւ Տեսուչ Խորհրդոց անդամներ , Հոգաբարձութեանց , Խնամակալութեանց , Թաղ. Խորհուրդներու եւ զանազան հաստատութեանց ներկայացուցիչներ , Պատրիարքարանի պաշտօնէութիւնը , եւ բազմութիւն Ժողովրդեան : Գոհարանական աղօթքի աւարտումէն ետքը Ս. Պատրիարք Հայրը՝ ընկերակցութեամբ Ա. գործակատար Տիգրան էֆ. Տէր-Ներսէսեանի՝ Կայս. Պալատ գնաց Հայ Ազգին հաւատարմական զբացումներն Ուղերձով մը մատուցանելու յոտս Կայս.

Գահայից : Ն. Ամենապատուութիւնը՝ հպատակ հասարակութեանց հոգեւոր պետերուն հետ պատիւ ունեցաւ ներկայանալու Օգոստոսփառ Սուլթանին : Ն. Կ. Վեհափառութիւնը՝ եղած բարեմաղթութիւններուն համար իր բարձր գոհունակութիւնը յայտնելով՝ յարեց թէ մեծազոյն բաղձանքն է իր ամէն կարգի հպատակներուն հանգստութիւնն ու բարիքը , եւ ուրախ է որ անոնց հոգեւոր պետերուն միջոցաւ իր Կայսերական բարեւները կը հաղորդէ անոնց : Վեհ. Կայսեր մեծարանոց արժանի եղան մասնաւորապէս Հայոց եւ Յունաց Պատրիարքները եւ Պուլկարաց Էկզարքը :

— Տ. Բարթողիմէոս եւ Տ. Մեհրոպ արքեպիսկոպոսները , Բերայի քարոզիչ Տ. Հմայեակ եպիսկ. ինչպէս նաեւ Նիկոմիդիոյ առաջնորդ Տ. Ստեփան եպիսկ. որ յատկապէս մայրաքաղաքս եկած էր , երկուշարթիօրը Կայս. Պալատ երթալով՝ շնորհաւորական ու բարեմաղթական Ուղերձներ մատուցին :

— Երկուշարթի գիշեր լուսազարդուած էին Պատրիարքարանը , Երուսաղէմատունը , Ս. Պատրիարք Հօր բնակարանը , Ս. Փրկչի Հիւանդանոցը , Գալֆայեան Ուրբանոցը , ինչպէս նաեւ բարձրատիճան եկեղեցականներու եւ բոլոր ծանօթ անձնաւորութեանց ու պաշտօնաւորներու բնակարանները :

Կայս. Գեահասում . — Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ հետեւեալ պատուանշաններն ու աստիճանները շնորհել հոգեւոր հովիւներու , Ժողովոց անդամներու եւ ուրիշ ազգայիններու զօրս կը շնորհաւորենք այս առթիւ .

Բ. կարգի Մէճիտիէ՝ Տ. Կիրակոս եպիսկ. Բէքմէզեանի , Գ. կարգի Օսմանիէ՝ Տ. Յակոբ եպիսկ. Աշոտի եւ Բերայի աւագերէց Տ. Մկրեան Հօր : Գ. կարգի Մէճիտիէ՝ Տրապիզոնի առաջնորդ Սեփիկ Վրդ. Պապահեանի , Բալուի առաջնորդ Աղան Վրդ. , Պաղտատի Պատր. փոխանորդ Դարբիէյ Վրդ. Անոյշեանի , Բաբերդի առաջն. տեղապահ Արիստակէս Վրդ. Պալեանի , Ակնայ տեղապահ Գէորդ Վրդ. Աշահեանի , Մարաշի եւ Զէյթունի տեղապահ Տ. Յովնանէս եւ Տ. Կարապետ Ա. քահանաներու , Գառնգիւղի աւագերէց Տ. Կա-

րապետ Ա. քահանայ Սանտալճեանի , Գուգլունճուքի , Սամաթիոյ եւ Սիւրատար Ա. Կարապետի աւագերէց՝ Տ. Կարապետ , Տ. Յովնանէս եւ Տ. Գարրիէլ Ա. քահանաներու , Հիւանդանոցի հոգաբարձուներէն՝ Տիգրան էֆ. Մանուկեանի , Գրիգոր էֆ. Ալեանաքեանի եւ Գրիգոր էֆ. Էլրէնեանի , ինչպէս նաեւ Մանուկ էֆ. Սմբատեանի եւ Հ. էֆ. Թաքթաքեանի (Իզմիրէն) : Դ. կարգի Օսմանիէ՝ Ուսումն. Խորհուրդի անդամներէն Յ. Գուրգէն , Ստեփան Կուրտիկեան եւ Հ. Ասատուր էֆ. ներու , Տնտ. եւ Դատաստ. Խորհուրդներու անդամներէն Կարապետ էֆ. Մայիսաւի եւ Տօքթ. Ալլահվէրտի էֆ. , Նոյնպէս , Միրան էֆ. Սմբատեանի եւ Մարտիկ էֆ. Շիրինեանի Դ. կարգի Մէճիտիէ՝ Էրաթիշա Գ. Մէհաէրեան էֆ. եւ Պատրիարքարանի քարտուղարներէն Միւսոն Չաքարեան , Նշան Փափաղեան , Գառնիկ Հայկեան եւ Լեւոն Քիւրքճեան էֆ ներու : Սանիէի աստիճան՝ ճարտարապետ Գրիգոր էֆ. Մելիտոսեանի :

Ամեն Օրմանեան Սրբազանից Պատրիարքական Աթոռը բարձրանալու տարեդարձին առթիւ , բազմաթիւ եկեղեցականներ ու աշխարհականներ շնորհաւորական այցելութիւն տուին Ն. Սրբազնութեան որ այս առթիւ ստացաւ նաեւ շնորհաւորական հեռագիրներ զաւառային առաջնորդներէ :

Միգրիչ ԿԵ. Նորիկեան, Եախորդ Ա. քարտուղար Պուքրէչի օսմ. զեսպանատան , Բ. Դրան արտաքին թղթակցութեանց զիւանին մուսէյիբիզ անուանուեցաւ :

Աղֆաճ դպրոցականներուն ցերեկուան ճաշի խնդիրը կարեկից ուշադրութեան մը առարկայ դարձած էր վերջերս Բերայի բարեկեցիկ դասակարգի հայ ընտանիքներուն մէջ որոնցմէ հետեւեալները յանձն առած են ամիսը մէկ անդամ 30 ի չափ աղքատիկ աղոց ճաշը իրենց տունէն զրկել , որպէսզի անոնք չի հարկադրուին ցամաք հացով եւ կամ անօթի անցունել ամբողջ օր մը , մինչ իրենց ընկերակիցները առատապէս կը կերակրուին իրենց քով , միեւնոյն սեղանատան մէջ :

Ս. Պատրիարք Հայր , Տիկնայք Յ. Աւանան եւ Ա. Դարակէօղեան , Տեարք Գ. Դար-



րիէլեան, Գ. Զօհրայ, Գ. Էվրէնեան, Դարպասեան Տ., Էվրէնեան Գրիգոր, Թաճեան Սարգիս, Թօքթեան Տիգրան, Թօքթեան Մկրտիչ (ամիսը 2 անգամ), Թորգոմեան Տօքթ., Խօրասանճեան Կ., Կիւմիւշէրտան Գ., Մամիկոնեան Միքայէլ, Մարկոսեան Յ., Յակոբեան Միքայէլ, Նօրատունեան Գարրիէլ, Շամտանճեան Գրիգոր Խան, Շահպաղ Մաքսուտ, Շահպաղ Խաչիկ, Ստամպօլլունեան Յովակիմ, Սմբատեան Մանուկ, Սեպուհ պէյ Մաքսուտ, Տիկին Վահան, Տէր-Ներսէսեան Միհրան, Տէրունեան Յովհաննէս Բարեպաշտունի Տիկին մը, որ իր անունը ծածկել կ'ուզէր — ինչպէս հաղորդեցին օրաթերթերը 600 տակի նուիրած է Արմաշի Գարեգանքին, մինչեւ իր մահը տարեկան տոկոս մը ստանալու միակ պայմանով: Մանգունի Էֆեաւ կը ծանուցանէ թէ նուիրատուն է այրի Տիկին Վասիլունի Մարկոսեան որ եէնիպիւղի ազգասնեւորուն համար ալ կտակ մը պատրաստած է:

Նշանախօսութիւն. — Օրաթերթերը ծանուցին Մկրտիչ էֆ. Մանուկեանի նշանախօսութիւնը Օր. Էօթէնի Արագեանի հետ (քեռորդի Միհրան էֆ. Սեթեանի), որ տեղի ունեցած է Դատրգիւղ, ընտանեկան չրջանակի մէջ, ազգականներու եւ բարեկամներու ներկայութեամբ: Մեր խնդակցութիւնները կողովենք, այս բարեգէպ նշանախօսութեան առթիւ, երկու կողմին, եւ մասնաւորապէս Մկրտիչ էֆ. Մանուկեանի որ կարեւոր դիրք մը ունի առեւտրական հրապարակի վրայ, ու վարչական չրջանակներու մէջ ալ միշտ բարգիւ ռ սիրելի դարձած է իր արգելահար ու խոհական պաշտօնավարութիւններովը:

## Տ Ա Ր Ե Գ Լ Խ Ո Ի Ն Մ Օ Տ

Վերջին անգամ ըլլալով, կը խնդրենք մեր այն գաւառային գործակալներէն որոնք տակաւին չեն փակած 1902 տարեջրմանի բաժանորդագրութեանց հաշիւը Մասիսի Խմբագրութեան հետ, որ հաճին փութացնել մնացորդ գումարներուն գանձումը ու առաքումը: Իսկ այն հեռաքնակ բաժանորդները, որոնց գումարած քաղաքներուն մէջ գործակալ չունինք, կրնան իրենց տարեկան բաժա-

նորդագրինը ուղղակի ղրկել մանտա-բօսթով եւ կամ նամակի բուլով: Այս վերջիններէն ալ կը խնդրենք որ այլևս չի յապաղեցնեն:

Ձեռք կարծեր որ, ո՛ր եւ է գործակալ կամ բաժանորդ, մեր այս ընդհանուր հրաւերը կարգալէն ետքը, չի փութայ մաքրել իր հաշիւը եւ Մասիսի միջոցաւ իրեն անուանական հրաւեր մը ուղղելու գծուար հարկին մէջ թողու զմեզ:

Տարեգլուխի մօտաւորութեան առթիւ, երբ արդէն իսկ սկսած ենք զբաղիլ յառաջիկայ չրջանի (1903) նախապատրաստութիւններով, թերթը աւելի ճոխ եւ աւելի՝ օգտակար ու հաճելի դարձնելու համար իր բազմաթիւ ընթերցողներուն, արդար է՝ կարծենք՝ աւելնկալել, որ առկախ հաշիւներով ու մնացորդ մանր մունր պահանջներու գանձումով զբաղելու տաղտուկէն այլևս ազատուած զգանք ինքզինքնիս: Լրագրական ձեռնարկ մը՝ գրական ըլլալուն համար՝ նիւթական պէտքերէ զերծ չէ, եւ շարաթաթերթ Մասիսին նիւթական պէտքերը լիովին կը հոգացունի, եթէ իւրաքանչիւր բաժանորդ փոյթ տանի միայն՝ ժամանակին վճարել իր տարեկան բաժնեգինը: Պարտաճանաչ բաժանորդներուն թիւը մեծամասնութիւն կը կազմէ բարեբաղդաբար, ինչ որ քաջալերիչ է եւ յարատեւութեան ազդակ մը եղաւ ու կ'ըլլայ Խմբագրութեանս համար. մնացորդները, փոքրամասնութիւնը, կարգալով մեր այս անկեղծ յայտարարութիւնը, կը յուսանք թէ բարեացաւ կամ յուշաբերում մը պիտի ունենան, եւ — գործակալ թէ բաժանորդ — պիտի ղրկեն իրենց պարտքը կազմող բաժանորդագրական պղտիկ գումարները:

## ԳԳՈՒՄ ՆՔ ՆՆԵՐԸ

Գգուանքներուն զիտութիւնը սորվեցայ  
Դու քուլդ, հոգի՛ս : Նախ վախճալով, գաղսնաբար  
Թեւըս թեւիդ վըրայ դըրած, ու ապա  
Դու հասկըցող, քու քոյլասրող անբարբառ.

Նայուածքիդ տակ համարձակիլ փորձելով,  
Շուրջը մեջքիդ ու ազդրերուդ սահանքին  
Վըրայ ձեռներուս անկումներովը գինով,  
Անկումներովն անյագ, անվերջ, գայրագին...

Մինչեւ այն պահն ուր վախճալով գգուանքի  
Մը գերագոյն մերձեցումէն, անկարող  
Դիմադրելու իր հեռութեան նըւանող՝

Կը հըրես քեւս ու սարսուռով մը ոտքի  
Կ'ելլես ժպտուն, կ'աւմըրելով, ամօթխած,  
Ձրգելով զիս հոս հիասթափ ու յոգնած...

Վ. Տ.

## ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

### ԼԱՈՒՐԵԼԼԱ

ՎԷՊ ԲԱՌՈՒԼ ՀԱՅԶԷԻ

Թիւ 2

— Ես այդ բանը երբեք չեմ մոռնար, ըստե  
աղջիկը ու սարսուռաց : Ու գիտցէք, հայր,  
ես անոր համար կ'ուզեմ կոյս մնալ որ չպառ-  
կանիմ մէկու մը, որ ինծի հետ գէշ վարուի  
ու ետքէն ալ զիս գգուէ : Եթէ հիմա մէկը  
ուզէ զիս ծեծել կամ համբուրել, այն ատեն  
գիտեմ պաշտպանել ինքզինքս : Բայց իմ  
մայրս չէր համարձակեր ինքզինքը պաշտպա-  
նել, ոչ ալ կրնար ինքզինքը ապահովել հար-  
ուածներուն ու համրոյրներուն դէմ, որով-  
հետեւ մայրս սիրած էր զայն. եւ ես չեմ  
ուզեր սիրել մէկը որուն պատճառաւ հիւանդ  
ու թշուառ ըլլամ :

— Միթէ դուն տղայ չի՞ս դեռ ու չես խօ-  
սիր մէկու մը պէս որ բնաւ բան մը չգիտեր

չախարհիս վրայ անցած դարձածի մասին :  
Ուրեմն բոլոր մարդիկ ալ այնպէ՞ս են, ինչ-  
պէս էր քու հէգ հայրդ, որոնք ինքզինքնին  
անձնատուր կ'ընեն իրենց քմահաճոյքներուն  
ու կիրքերուն եւ իրենց կնոջ հետ գէշ կը  
վարուին : Դուն, ամբողջ քու զրացիներուդ  
մէջ, տեսած չե՞ս բարեհամբոյր մարդիկ,  
նաեւ կ'ընէր որոնք իրենց այրերուն հետ  
կ'ապրին անդորրութեամբ ու սիրով :

— Ի՞նչ հօրս մասին ալ մէկը բան մը չէր  
գիտեր թէ ինչպէ՞ս կը վարուէր մօրս հետ :  
որովհետեւ մայրս հազար անգամ կը նախընտ-  
րէր մեռնիլ, քան թէ իր մասին մէկուն բան  
մը ըսել ու արտունջ ընել : Ու այս բոլորը  
անոր համար որ մայրս կը սիրէր. զայն : Եթէ



այսպէս է սէրը որ կը փակէ մէկուն չրթունք-  
ները այն ժամանակ, ուր պէտք է օգնու-  
թիւն կանչէ, ու մէկը անպաշտպան կը թո-  
ղու զայրոյթին դէմ, ինչպէս որ ամէնէն  
վատթար թշնամին կրնայ ընել, ուրեմն ես  
երբեք չեմ ուզեր սիրտս կցել մարդու մը:

— Ես քեզի կ'ըսեմ թէ դուն գեռ աղայ  
ես ու չես գիտեր թէ ինչ կը խօսիս: Պէտք  
է դեռ շատ հարցաքննութիւն քու սրտէդ, թէ  
կ'ուզե՞ս սիրել թէ չէ, երբ սիրոյդ ժամա-  
նակը գայ: — Ու դադարէ մը ետքը, դար-  
ձեալ՝

— Եւ այդ նկատրիչին մասին ալ կը կար-  
ծէիր թէ խիստ պիտի վարուի քեզի հետ:

— Ան իր աչքերը այնպէս սեւեռեց, որուն  
նմանը ես իմ հօրս վրայ տեսած եմ, երբ  
ձորէն ներդուրթիւն կը խնդրէր ու զայն իր  
բազուկներուն մէջ առնել կ'ուզէր, անոր  
վրաստին անոյշ խօսքեր ըսելու համար: Ես  
այդ աչքերը կը ճանչնամ. զանոնք կրողը  
կրնայ ծնծել իր կինը որ իրեն վրէժ պատ-  
ճառող բան մը ըրած չըլլայ: Ես դողացի երբ  
նորէն տեսայ այդ աչքերը:

Յետոյ յամառութեամբ լռեց աղջիկը.  
լռեց նաեւ ժողովրդապետը որ ապահովարար  
ժառանգիկ չատ մը գեղեցիկ ասացածներ՝  
զորս պիտի կրնար ներկայացնել աղջկան,  
բայց ներկայութիւնը երիտասարդ նաւավա-  
րին որ խոստովանութեան վերջանալուն մօ-  
տերը անհանդարտ ձեւ մը առած էր, զոցեց  
անոր բերանը:

Երբ, երկու ժամուան ուղեւորութենէ մը  
ետքը, հասան Քարտի փոքրիկ նաւահան-  
գիստը, Անթոնինո բռնեց հոգեւորականին  
կեռքէն եւ ծանծաղ ալիքներուն վրայէն՝ առ-  
բաւ զայն ու գետինը իջեցուց պատկառան-  
քով: Բայց Լաուրէլլա չէր ուզած սպասել  
որպէս զի նաւավարը վերստին ջուրերուն մէ-  
ջէն քալելով դար ու զինքն ալ տանէր:  
Մանկամարդ աղջիկը իր վերարկուն ամփո-  
ղեց, աջ ձեռքը առաւ փայտէ սանդուղները,  
կապոյն ալ ձախը, ու ջուրին մէջէն արագ  
մը չփառալով ցամաք ելաւ:

— Ապահովարար ես այսօր երկար տանն կը  
մնամ Քարտի, ըսաւ քահանան, դուն պէտք  
դունիս ինծի սպասելու: Շատ շատ թերեւս

առտուն կանուխ տուն դառնամ: Իսկ դուն,  
Լաուրէլլա, երբ տուն երթաս, բարեւէ մայ-  
րիկդ. ես այս չարաթ իսկ ձեզի կ'այցեւեմ:  
Բայց դուն գիշերուընէ առաջ ես կը դառնաս,  
չէ՞:

— Եթէ յարմարի, ըսաւ աղջիկը, ու այն-  
պէս ձեւացուց թէ վերարկուովը զբաղած է:

— Դուն գիտես որ ես ալ ետ պիտի դառ-  
նամ, ըսաւ նաւավարը, իբր թէ շատ  
անտարրեր չեշտով մը: Ես կը սպասեմ քեզի  
մինչեւ Ավէ. Մատիա, եթէ մինչեւ այն ատեն  
չգաս, ինծի համար միեւնոյն բանն է:

— Դուն պէտք է գաս, Լաուրէլլա, ընդ-  
միջեց քահանան. պէտք չէ որ մայրդ գիշեր  
մը իսկ մինակ թողուս. — Երթալիք տեղդ  
հետեւ է:

— Անաքարտի վրայ, այգիի մը մէջ:

— Է՛, ա՛լ ես Քարտի կը մնամ. Աստուած  
պահէ քեզ, աղջիկս, ու քեզ՝ որդիս:

Լաուրէլլա անոր ձեռքը համբուրեց ու  
մնաք բարով մը ըսաւ որմէ պէտք է բաժին  
ունենային ժողովրդապետն ու Անթոնինո.  
Բայց Անթոնինո ինքզինքին չվերագրեց  
զայն. զխարկը հանեց քահանային առջեւ,  
առանց իսկ Լաուրէլլային նայելու:

Բայց երբ երկուքն ալ անոր դարձուցած  
էին իրենց կռնակը, իր արկնարկի շրջեցուց  
հոգեւորականին շուրջը, որ դժուարութեամբ  
կը քալէր թանձր խճաքներուն վրայէն, ու  
ետքը ուղղեց զայն աղջկան ետեւէն, որ  
կ'ուղղուէր դէպի աջակողմի բարձրութիւնը,  
ձեռքը՝ կիզիչ արեւուն դէմ՝ աչքերուն վրայ  
բռնած: Ծամբուն վերը պատերսուն առջեւ  
դառնալէ առաջ, Լաուրէլլա ակնթարթ մը  
հանդիստ կեցաւ, իբրեւ թէ չունչ առնելու  
համար եւ շուրջը դիտեց: Ծովախորշը կը  
գտնուէր իր ոտքերուն տակ, իր շուրջը կը  
կուտէին բարձրաբերձ, անմերձեւալի ժայռեր,  
ու ծովը հազուադիւրս շքեղութեամբ մը կը  
փայլեցնէր իր կապոյտը: — Աներկրայելօրէն  
կ'արժէր որ մարդ կենայ ու դիտէ այս տե-  
սարանը: Դիպումն այնպէս կարգադրեց որ  
Լաուրէլլայի ակնարկը, Անթոնինոյի մակոյ-  
կին առջեւէն անցնելու ժամանակ, հանդիպի  
անոր ակնարկին զոր Անթոնինո ուղղած էր  
ետեւէն, Երկուքն ալ շարժում մը ըրին այն

մարդոց պէս՝ որոնք կ'ուզեն իրենք զիրենք չքմեղացնել թէ բան մը սխալմամբ տեղի ունեցած է, որովհետքը աղջիկը շարունակեց իր ճամբան դժնէ դէմքով մը :

Բ.

Կէս օրը հազիւ ժամ մը անցած էր, ու Անթոնինօ երկու ժամէ ի վեր նստած կը մնար ձկնորսներու կապելայի մը առջեւ, նստաւանի մը վրայ : Մտքին մէջէն բաներ մը անցնելու էին, որովհետեւ ամէն հինգ վայրկեան անցնելուն՝ տեղէն կը ցատքէր, դուրս կ'երթար ու խնամով կը գննէր այն ճամբաները որոնք աջէն ձախէն կ'առաջնորդէին դէպի կղզիին երկու պզտիկ քաղաքները : Օգը իրեն մտահոգութիւն կը պատճառէր, կ'ըսէր այն ատեն զինկապանուհիին : Թէեւ օդը պարզ էր, բայց ինք կը ճանչնար երկրնքին ու ծովուն այս գոյնը : Ծովը ճիշդ այս երեւոյթն ունէր, վերջին փոթորիկէն առաջ, որու միջոցին ինք մեծ վտանգով ցամաք հանած էր անգլիացի ընտանիքը : Տիկինը պէտք էր յիշէր :

— Զէ, պատասխանեց կինը :

— Հիմա, տիկինը պէտք է այս բանին վրայ մտածէ, եթէ օդը գիշերուընէ առաջ փոխուի :

— Անգիի կողմը շատ Պարոններ ու Տիկիններ կ'ան, հարցուց զինկապանուհին դադարէ մը ետքը :

— Դեռ նոր սկսան գալ. մինչեւ հիմա օդերը գէշ էին : Ըսգանքի համար եկողները ուշացան :

— Գարունը ուշ եկաւ : Դուք աւելի չանցա՞ք, քան մենք հոս, Քարոսի վրայ :

— Շահա՞ծ. չպիտի բաւէր՝ չարաթը երկու անգամ մաքառոնի ուտելու, եթէ միայն ծովու վրայ թիավարելու յանձնարարութիւն ունենայի : Երբեմն երբեմն դէպի Նարոյի նաւակ մը տանիլ, կամ ծովուն վրայ պտտցնել սինեօրէ մը որ կարծով ձուկ որսալ կ'ուզէր, ահա՛ ամէնը : Բայց դուք գիտէ՞ք որ իմ հօրեղբայրս մեծամեծ նարնջաստաններ ունի ու հարուստ մարդ մըն է : Թոնինօ, կ'ըսէ ան, որչափ ես կ'ապրիմ, դուն չքաւորութիւն չպիտի կրես, ու անկէ ետքն ալ քու մասիդ

պէտք եղածը պիտի հոգացուի : Այս կերպով Աստուծոյ օգնութեամբ ձմեռը հանեցի :

— Զեր հօրեղբայրը զաւակ ունի՞ր :

— Զէ, ախուսացած չէ, ու երկար ժամանակէ ի վեր օտար երկիր կը գտնուէր, ուր, սակայն, բաւական դրամ գիւղած է : Հիմա գիտաւորութիւն ունի մեծ ձկնորսութեան մը սկսելու, եւ կ'ուզէ զիս ամբողջ գործին վրայ գնել որ ուղղամասութեամբ վարեմ :

— Ուրեմն դուք անհոգ մարդ մըն էք, Անթոնինօ :

Երիտասարդ նաւավարը ցնցեց ուսերը, ու

— Ամէն մարդ իր կրելիք բեռը ունի, պատասխանեց : Յետոյ ցատքեց եւ նորէն աջ ու ձախ դիտեց օդը, թէպէտեւ պէտք էր գիտնար թէ միայն մէկ հիւսիսակողմ (Wetterseite) կայ :

— Ես ձեզի շիշ մըն ալ կը բերեմ. ձեր հօրեղբայրը կրնայ վճարել, ըսաւ զինկապանուհին :

— Մի միայն մէկ գաւաթ. որովհետեւ դուք կրակի պէս գինի մը ունիք հոս. գլուխ լոյրլոյլէ՞ տաքցած է արդէն :

— Ան չի գինովցնել. դուք կրնաք խմել, որքան որ կ'ուզէք : Ահա էրիկս ալ կուգայ : Անոր հետ ալ դեռ պէտք է ժամանակ մը նստիք ու չաղակրատէք :

Իրաւ ալ բարձունքէն վար եկաւ կապելային տէրը՝ ուղկանը ուսէն կախուած, կարմիր գլխարկն ալ գոռոզ մազերուն վրայ : Քաղաքը ձուկ տարած էր, ինչ որ յանձնարարած էր ազնուական տիկինը, Սորէնթի պզտիկ ժողովրդապետին հրամցնելու համար : Երբ զինկապանը նշմարեց երիտասարդ նաւավարը, ձեռքով անոր սրտազին «բարի՛ եկար» ինչան մը տուաւ, ու յետոյ նստաւ անոր քով, նստարանին վրայ եւ սկսաւ հարցնել ու պատմել : Հազիւ թէ անոր կինը կը բնիք երկրորդ շիշ մը բուն Գարոսի չխարդախուած գինիէն, երբ ձախակողմի եղբորային աւագը չառաչեցաւ, ու Լաուրէլլա եկաւ Անաքարոսի ճամբէն : Աղջիկը զլիով խուսափուկ բարեւ մը տուաւ եւ կեցաւ անվճարական ու լուռ :

Անթոնինօ տեղէն ցատքեց :



— Պէտք է մեկնիմ, ըսաւ : Եկողը Սոսիսի յայտնի մըն է, որ այս առաւել կանաւ եկաւ հայր Քրիստոսի հետ ու գիշերուինէ առաջ՝ դարձեալ կ'ուզէ վերադառնալ իր հիւանդ մօրը քով :

— Է՛, է, դեռ շատ ժամանակ կայ գիշերուան, ըսաւ ձկնորսը : ան դեռ ժամանակ կ'ունենայ գաւաթ մը գինի խմելու : Հէ՛, կնի՛կ, գաւաթ մըն ալ բեր :

— Շնորհակալ եմ, ես չեմ խմեր, պատասխանեց Լաուրէլլա, ու կեցաւ բաւական հեռու :

— Դո՛ւն մատուցակէ, կնիկ, մատուցակէ : ան այնպէս կընէ որ ստիպենք :

— Թողէ՛ք զայն, ըսաւ չարածծի երիտասարդը : Ան պինդ գլուխ մը ունի, բան մը զոր անգամ մը չուզեր, ալ անհնար է որ հոգեւորական մը իսկ համոզէ զայն : — Յետոյ ամապարանքով հրաժեշտ առաւ, վազեց դէպի վարի նաւակը, քակեց չուանը ու սպասեց աղջկան գալուն : Լաուրէլլա՝ ետին գառնալով՝ անգամ մըն ալ բարեւեց գինեպանուհին ու յետոյ վարանոտ քայլերով գնաց դէպի նաւակը : Նախ իր շուրջը դիտեց ամէն կողմ, իբր թէ կը սպասէր որ դեռ ուրիշ ընկերներ ալ պէտք է գտնուէին : Ծովախորշը սակայն թափուր էր : Ձկնորսները կը քնանային կամ ծովուն վրայ կը թիավարէին կարթերով եւ ուսկաններով : քանի մը կիներ ու տղաքներ գտնուեցան մէջ կը նստէին քնանալով կամ մանկով, եւ օտարները՝ որոնք առաւօտուն հող եկած էին, մեկնելու համար կը սպասէին որ օրուան զով ժամը հասնի : Մանկամարդ աղջիկը չէր ալ կրնար երկար առեն իր շուրջը դիտել, որովհետեւ, դիմադրել կարենալէն առաջ, Անթոնինօ զայն իր թեւերուն մէջ առաւ ու տղու մը պէս փոխադրեց նաւակը : Յետոյ ետ քաշուեցաւ Անթոնինօ, ու թեւ ձակներու քանի մը բախումով, արդէն անոնք կը գտնուէին բաց ծովուն վրայ :

Լաուրէլլա նստած էր նաւակին առջեւի կողմը, եւ կէս մը տղուն դարձուցած էր իր կնակը, այնպէս որ Անթոնինօ զայն կողմնակի կրնար դիտել : Աղջկան դիմագծերը հիմա սովորականէն աւելի լուրջ էին : Իր նեղ ձակտին վրայ վար կը կախուէին իր գան-

գուրները, իր նրբագիծ դէմքին վրայ կը դռաւոր ինքնահաճութեան երանգ մը, ու իր լեցուն բերանը գոցուած էր ամրապէս : — Երբ որ բաւական ժամանակ ծովուն վրայ նաւավարեցին այսպէս լուռ ու հանդարտ, աղջիկը զգաց արեւուն տապը, թաշկինակին մէջէն առաւ հացը, ու թաշկինակն ալ կապեց իր մազերուն հիւսքերուն : Յետոյ սկսաւ ուտել հացը, իր կէս օրուան ճաշն ընելով, որովհետեւ բան մը կերած չէր Քարօրի մէջ :

Անթոնինօ երկար առեն հանդիսատես չեղաւ այս տեսարանին : Երկու նարինջ հանեց կողովներէն մէկուն մէջէն՝ որոնք առաւունջ նարինջով լեցուած էին, ու ըսաւ :

— Ահա հացիդ հետ ուտելու բան մը, Լաուրէլլա : Մի՛ կարծեր թէ քեզի համար պահած եմ, կողովէն նաւակին մէջ գործած էին : Ես զանոնք գտայ, երբ նաւակին մէջ վերստին կը շարէի պարապ կողովներ :

— Ատոնք դո՛ւն կեր : Իմ հացս ինծի կը բաւէ :

— Աս տաքին՝ նարինջները զովարար են, դուն ալ երկար վազած ես :

— Ինծի վերը տուին գաւաթ մը ջուր, որ զիս զովացուց արդէն :

— Ինչպէս որ կ'ուզես, ըսաւ Անթոնինօ, ու նարինջները վերստին ձեռք կողովին մէջ : Նորէն հանդարտ լուծիւն : Ծովը ողորկ էր հայելիի մը պէս, ու պզտիկ շառաչուն մը կը հանէր նաւակին շուրջը : Ծովային ճերմակ թռչունները՝ որոնք ծովեզերքի խոռոչներուն մէջ բոյն կը գնեն, իրենց որսին կ'երթային անշուշտ :

— Կրնաս քու մօրդ տանիլ երկու նարինջները, ըսաւ դարձեալ Անթոնինօ :

— Մենք տունը ունինք, եւ երբ հատնի, կ'երթամ նորէն կը գնեմ :

— Ի՛նչ չեմ ունի, ատոնք ալ տուր ու իմ կողմէս ալ բարեւ մը :

— Բայց մայրս քեզ չի ճանչնար :

— Կրնաս ըսել թէ ո՛վ եմ :

— Ե՛ս ալ քեզ չեմ ճանչնար :

Այս առաջին անգամը չէր որ Լաուրէլլա այսպէս չի ճանչնալ կը ձեռացնէր նաւավարը : Տարի մը առաջ, երբ նկարիչը դեռ նոր եկած էր Սորէնթ, պատահեցաւ որ, կիրակի օր

մը , Անթոնինո կը խաղար , տեղացի ուրիշ երիտասարդներու հետ , Պոչկա գիւսաւոր փողոցին քովի հրապարակին վրայ : Առաջին անգամ ըլլալով՝ նկարիչը հոն հանդիպեցաւ Լաուրէլլային որ ջութի կողմ մը գլխուն վրայ առանց անոր ուշադրութիւն դարձնելու , առջեւէն անցաւ : Նաբոլիցին՝ անոր տեսքէն յափշտակուած՝ կեցաւ ու դիտեց զայն ետեւէն , թէպէտեւ խաղի կրկէսին մէջտեղը կը դադարէր եւ երկու քայլով կրնար հեռաւորութիւնը անցնիլ : Գնդակի զօրաւոր հարուած մը իր ուղեւորուն՝ իրեն յիշեցուց թէ հոն տեղը չէր իր մտածումներուն մէջ կորսուելու : Շուրջը դիտեց , իբր թէ չքմեղացուի մը կը սպասէր : Երիտասարդ նաւավարը որ հարուածը տուած էր , հպարտ ու լուռ կեցաւ իր բարեկամներուն միջեւ , այնպէս որ օտարականը խոհեմութիւն համարեց խուսափիլ վէճի բռնուելէ ու հեռանալ : Բայց եւ այնպէս , հոն կռուի մասին խօսած էին . ու նորէն խօսեցան ալ , երբ նկարիչը բացէ ի բաց ամուսնութեան խնդրեց Լաուրէլլան . — «Եւ զայն չեմ ճանչնար» , կ'ըսէր Լաուրէլլա տհաճութեամբ , երբ նկարիչը զայն կը հարցափորձէր թէ արդեօք այն անքաղաքավար ստահակին համար է որ կը մերժէ զինքը : Ահա աղջկան այս խօսակցութիւնն ալ հասած էր Անթոնինոյի ականջին : Անկէ ի վեր , երբ Անթոնինո կը հանդիպէր աղջկան , այս վերջինը ապահովարար կը ճանչնար զայն :

(Շարունակելի)

## ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Յակոբ էֆ. Բագրատունի վերսկսաւ իր կիրակնօրեայ դասերը Նոյ. Յին , Բանկալիի , իր առեւտրական վարժարանին մէջ , 20 ի չափ ուսանողներով : Իր ծրագրին համաձայն պիտի սորվեցնէ հետեւեալները 7 ամսուան մէջ , կիրակի օրերը 3 ժամու զրազուժով միայն :

Ա. — Վաճառականական գիտելիք. Առեւտրական օրէնք , սովորութիւնք , գործառնութեանց եղանակներ եւայլն : Բ. — Տոնաւալարութիւն. Պարզ տոմար , կրկնատոմար ,

բազրատոմար եւ ընթացիկ հաշիւներ : Գ. — Հաշուազիտութիւն. Առեւտրի մէջ պատահած ընդհ. հաշիւներ :

Վճարումն է ամսական մէկ մէճիւր . յաջողածները՝ կը ստանան վկայագիր :

Այս առթիւ աւելորդ չենք սեպեր ակնարկ մը նետել սոյն կիրակնօրեայ վարժարանի կամ դասարանի անցելոյն , ծագման եւ անոր արդիւնքին վրայ :

Յակոբ էֆ. Բագրատունի՝ վկայեալ կայս. Առեւտր. Վարժարանէն , որքան գործնական նոյնքան ձեռներէց միտք մը , տեսաւ պէտքը առեւտրական ճիւղերուն , ու , Բերայի Արհեստանոցին մէջ , 1893 ին , սկսաւ կիրակնօրեայ դասարանը որ յետոյ միւսնոյն ծրագրով շարունակուեցաւ Էստեան վարժարանի մէջ , ուր 10 տարուան պաշտօնավարութիւն մը ունի մասնագէտ-ուսուցիչը :

Մինչեւ 1899 թուականը 85 չրջանաւարտ տուած է կիրակնօրեայ վարժարանը : Երեք տարուան զաղարէ մը վերջ՝ սոյն կիրակնօրեայ վարժարանի իններորդ չրջանով վերադադրած գոհութեամբ պիտի ողջունուի , քանի որ օգտակար եղած է ան , եւ կը խոստանայ յարատեւել վաճառականութեան փափաք ունեցողներուն օգտակար հանդիսանալով : Կը լսենք նաեւ թէ Բագրատունի էֆէնտի կարեւոր միջոցներ ձեռք առած է տալու համար երբեմնի փայլը իր վարժարանին , որուն արդարեւ պէտք ունին Բանկալիի , Նշան-Թաշի եւ Շիլիի թաղերու հայ ծնողքները :

« Մ Ս Ս Ս » ի

Յառաջիկայ քիւով

ՔՐԻԶԱՆԹԷՄԷՆ

« Ք Է Մ Ի Ն Ի Զ Մ » Ը . . .

ՀԱՅ ԿԻՆԵՐՈՒՆ

Արսովասէր Կ. Ս. Իիթիիճեմն

Տպագրութիւն Ե. Մ. Տ. Է. Ս. Ս. Ս.

Կ. Պոլիս , Ֆինանսերու եօղուղու թիւ 27



# ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Գնդ. Տոբ. Աղեխանդր Պէլ Արապեան այս անգամ իր բնակութիւնը հաստատած է Բերա, Թարա-Պաշի քիւ 121, ուր կը գրեցուի առաջ եւ երկոյ: Իսկ կես օրուան միջոցները, ուրբաթ եւ կիրակիէ զաւ, կը գտնուի Պաննե-Գաբու, Մինասեան դեղաւանդ:

3-10

## ՏՈՒԹ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Կեդրոնացեղի Մասքեոսեան Տպարան Ֆինանսները, Կ. Պոլիս

Գրտական շարժում Ա. Տարի (1885) (Սպառած) : — Գրտական շարժում Բ. Տարի (1886) 20 դր : — Գրտական շարժում Գ. Տարի (1887) 20 դր : — Բնական Պատմութիւն Ա. հատար (Կենդ. Հիւսուածարանութիւն եւ Մարդկային կազմախօսութիւն ու Բնախօսութիւն, Դասագիրք երկրորդական վարժարանաց) : 40 դր : — Նախորդին համառար : Դասագիրք Նախակրթարանաց : 8 դր : — Ուսումնասիրութիւն միջոյն քաղաքային պատմաառարանութեան եւ կազմութեան վրայ (Ֆրանսերէն) 10 դր : — Ծագումն հայ տառից (Պատկեալ Իզմիրեանց

մրցանակաւ) 10 դր : — Մանրէարանութիւն 10 դր : — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Ֆրանսերէն) 10 դր : — Գրիգոր Աղաթոն (Ծագումն եւ կենսագրութիւն) 2 1/2 դր : — Առողջապահութիւն : 25 դր : — Ծննդական գործարանք (Կազմախօսութիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութիւն) 6 դր : — Մարդկային Սոցիալախօսութիւն : 5 դր : — Բառացուցակ Արտանունաց (Բ. Տարի) 3 դր : — Տարունակութիւն (Գ. Տարի) 3 դր : — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Հայ. Թարգմանութիւն) 10 դր :

3-10

## ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

### ՏՈՒԹ. Գ. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԲԻՒ 200

Կալարա-Սերայի Լիւթին դէմ

Դե. Ե. Ե. օրերը առաջեան կանուխէն մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

Բ. Դ. Ե. օրերը 6 էն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժախդրուքեամբ

## ԻԻՆԻՕՆ

### ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

#### ՀՐԴԵՀԻ ՀԻԻՂ

|                                   |                  |
|-----------------------------------|------------------|
| Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ փեսք | 240,000,000 Ֆր.  |
| 1899ին գանձուած ապահովագին        | 19,500,000 »     |
| Դրամագլուխ եւ պահեստ              | 105,000,000 »    |
| Ապահովագրեալ դրամագլուխ           | 18,000,000,000 » |

#### ԿԵՆԱՑ ԽԻԻՂ

|                                   |                |
|-----------------------------------|----------------|
| Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ փեսք | 99,000,000 Ֆր. |
| Ընթացիկ ապահովագրութիւնք          | 253,000,000 »  |
| Դրամագլուխ եւ պահեստք             | 150,000,000 »  |

որ ընթացիկ ապահովագրութեանց դաւարին հետ զը համեմատի 60% — ինչ որ «Ինիօն»ի ապահովագրելոց կ'ընծայի հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏԵՆԸ ԱՐՆԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐԵԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ.

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպատուար պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո'ր եւ է ընկերութեան պայմանները : Եանաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինիօնի ապահովագրողը ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ Եանաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տեօրհնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Բանասպուրուն խան, Օսմ. Պանգային դիմացը

Դորակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

# Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

## ՏՊԱՐԱՆԸ

Յարատել զարգացմամբ հասած է Տպարաններու  
առաջին կարգին.

## ԿԱԶՄԱՏՈՒՆԸ

Ամբոցելի ըլլալու կէս դարու համբաւը կը վայելէ.

## ԹՂԹԱՎԱՅԱՌԱՆՈՅԸ

Ճոխ մթերք մը ունի լաւագոյն տեսակէ

Հետեւաբար աւելորդ է ըսել թէ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ, ԿԱԶՄԻ և  
ԹՂԹԵՂԻՆԱՅ վերաբերեալ ամէն կարգի խանձնարարութեանց  
համար գիմուելիք լաւագոյն հաստատութիւնն է

## Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԸԼ-ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

---

Հրատարակուեցաւ

ԸՆԴԱՐՁԱԿ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ

1903 ՏԱՐԻՈՅ

(ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ)

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ սոյն ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑԸ, որ երկարամեայ կանոնաւոր  
հրատարակութեամբ հաստատուն համբաւ մը ունի, յառաջիկայ տարուան համար ի լոյս ըն-  
ծալուած է չա՛տ աւելի ճոխ բովանդակութեամբ մը որ ամէն կարգի ընթերցողներու հա-  
մար օգտակար ու շահեկան կը դարձնէ զայն. Գին 3 դր.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑԻՆ ՀԱՄԱՌՈՏն ալ հրատարակուած է եւ կը գտնուի բոլոր  
հայ գրավաճառներուն քով. Գին 1 դր.

Վաճառման կեդրոնատեղի, Յ. Մատթէոսեան թղթավաճառանոցը Պայպ, Հաուզ, Կ. Պոլիս.